

ԿՈՒՏԻՆԱՅԱՅ ՏԱՂԱՍԱՅՆԵՐ



Դժբախտաբար կուտինահայ տաղերգու թեան մը որոշ հետքեր շատ չեն հասած մեզի, բայց նկատելով մէկ կողմէ այն՝ որ Կուտինայի արդէն իսկ բարգաւաճ հայու թիւը ծԼ. դարուն ճոխացած է գուսաններու հայրենիքէն՝ Ազուլիսէն եկած երկրորդ գաղութով մը, և միւս կողմէ՝ ժամանակակից կուտինահայուն հնչած ձայնի քաղցրութիւնն ու ճկունութիւնը, կըրնանք հետեցնել թէ Կուտինան եղած է Արևմտեան Փոքր - Ասիայի թրքախօս մասին « Գողթան գաւառ » :

Պրպտուսներս, որքան կարելի է, ես տանելով առաջին անգամ կը պատահիմ թրքերէն բառախաղով քառեակի մը կանխուած ինքնարդարացուցիչ հայերէն քառատողով մը, զորս 1697ին յօրինած է Հ. Անտոն՝ Ս. Աստուածածին եկեղեցիի քահանան.

« Ո՛վ սիրելիք հայրք իմ եղբայր.  
 Որ եմ գծուց և տիմար.  
 Որ գրելոց իմ եսքի բառ  
 Վասն եկեղեցոյ պղընծի համար :  
 « Սէնէ պին երգ զոք ալթըղայ ալարք պիր  
 [ղագան  
 Տոսաթ էլտէ իթէն աչ կուզուծի արէթլիք  
 [ղագան  
 Ուտու թեվարիկղէ եթան պէշ զգան  
 Տէր Անտոն ճառ եթիշմէս օլուրուտու պաշը -  
 [մըզ ճագան » :

Քիւրթիկ ըսուած յիշատակարանի մը քանազան էջերէն քաղելով՝ Տէր Անտոնի տոհմագրութիւնը կը գտնենք Ղեւտական հիւսըով մը, Ռձ(= 1651) ամին կը յիշատակուի Տէր Աստուածատուր մը (մեռած Ռձի = 1671 ամին), որ հաւանաբար մեծ պապն է մեր Տ. Անտոնին, և երէցկիւնը Սուլթան՝ որոնք եկեղեցիին նուիրած են աւետարան, սեղանի ծածկոց, խաչ ու շապիկ : Ասոր որդին է Տ. Անտոն Ա. (երէցկիւնը՝ Յուստիանէ), կանխահասօրէն վախճանած ՌձԿ = 1665ին. իր հոգւոյն համար խորանին դրան աջակողմը կա-

խուած է կանթեղ մը ու վճարուած 1000 ստակ : Յաջորդ տարին՝ ասոր տեղը երէց կը ձեռնադրուի իր որդին Ստեփաննոսը՝ հայրը մեր Տ. Անտոնին, որ ՅՅ տարի Աստուծոյ սան ծառայելէ յետոյ կը վերափոխուի ՌձԽ = 1699ին և մարմինը կ'ամփոփուի « Եկեղեցւոյ դուռն մերձ տէր Պետրոսին աջակողմեան դիմին » : Ան երէցկին ունենալով Հոփսիսի մը՝ յայտնի չէ թէ երբ ծնունդ կու տայ Տ. Անտոնին, որ իր մասին կը շարագրէ « Աղաչեմ ո՛վ « դասը քահանայից և ժողովրդոց և ման « կանցը եկեղեցւոյ զեաննալ և զանպիտան « և ամենայն բարեաց թափուր զտէր Ան « տոնս որ անուամբս միայն և ոչ գործովս « դեռ նորընծայ գոլով զի ՌձԾԻ ( — 1705) « թվիս ձեռնադրեալ եղէ. որ բազում « աշխատանք ունիմ թէ կոնդակս գրելու « և թէ ժողովուրդս որդորկելոյ, ևն » . ասկէ կը հետևի թէ Տ. Անտոն եղած է միևնոյն աստին թէ՛ գրող և թէ խօսող հմուտ եկեղեցական մը : Իրեն է որ կը պարտինք վերոյիշեալ յիշատակարանը, զարուար և արժէքաւոր, որ 1445 - 1731, ունի 286 տարուան անդուլթիւն մը : Տ. Անտոն իրրև ամենագիտակից ու ժրջան երէցը Կուտինայի, 1716ին բերած, անոր մէջ ամփոփած է իրմէ առաջուան բոլոր ժամանակագրական յիշատակարանները, իր օրով պատահած դէպքերը, յայսպէսով թեւադիբ դառնալով յաջորդներու որ նոյն գործը շարունակեն : Յիշատակարանի ըսկըզնական աշխատութեան մէջ իբր գրագիր իրեն օժանդակ ունեցած է հօրեղբայրը՝ Տ. Արուսթիւն, նոյնպէս քահանայ « Սկսե « ցանք, կ'ըսէ, հօր եղպորս տէր արու « թիւնին հետն. քանզի սա գրագիր գոլով « իմ վերա երախտիք ունի, Աստուած « լուսաւորէ իւր հոգին. և ետոյ վախճա « նեցաւ ՌձԿԳ ( = 1714) թվին... Եւ « սկսեցի վերստին նորոգել... յոյժ աշ « խառեալ եւ գտիւ և զգիշեր անըտն « մնալով... Եւ ետու յիշատակ Սը - Աս « տուածածին ինձ և ծնողացըս տէր « ստեփաննոսին ոմրս հոփսիսի մէջն, ըն « կերթս հեղինէին և այլ ամէն արեան

« մերձաւորացս »: Սոյն յիշատակարանը թէև ոչ միայր ու բազմադիրմի, սակայն հետագօտեւն ուրիշ տուրքներու հետ կրնար գործիք ծառայել այն քննասէրին ձեռք՝ որ կ'ուզէ պատմութիւնը կառուցանել կուտինահայ հին գաղութին, անցեալ տարի փոքրը — Ասիայի Հիւլլենական պարտութեան ատեն ցիրտցան եղած այնքան արեւալի կերպով: Տէր Անտոն երիցական պաշտօն վարելով 17 տարի և թողլով ուստերք (ՀՃ. Սարգիս, լուսարար տիրացու Յարութիւն՝ համաձայն տեղ մը նըշանակուածին, և թերևս ուրիշներ ալ) ու դատերք, կը վախճանի 1722 ին, դեռ երիտապարզ, զրեթէ 47 տարեկանին, եթէ Չեռնադրութեանը (1705) տարիքը նկատենք միջին հաշուով 30:

\*  
\* \*

Տ. Անտոնէն անմիջապէս վերջը երևան կու գայ ուրիշ երէց տաղասաց մը, Տ. Յարութիւն, որուն վրայ դժբախտաբար կենսագրական լայն ծանօթութիւն չունենալով առձեռն, մեզի անյայտ կը մնան իր ծնունդի ու մահուան թուականները: Սա ալ եղած է Ս. Աստուածածին տանարի քահանայաներէն մէկը և շատ հաւանաբար է այն մեծ Տէր Արրիկը որու մասին տակաւին աւանդութիւնը լռած չէ կուտինահայերու բերնին մէջ: Իրմէ ունինք երեք երկաք տաղեր, զորս կերտած է իր ծառայած սրբաՎայրին սաստիկ հեղեղէ մը աւերուամին ու վերանորոգութեանն առիթով. աւանց մէջ կը փայլին տաղասացին լեզուական յատկութիւնն ու նկարագրական ճոխութիւնը և որոնք ահաւաստիկ.

Ի թուաբերութեան հայկազեան տոմարի.  
Հազար հարիւր եօթնասուն և հնգի.  
Հոռոմական յամսեան յուլիսի  
Եւ ի քանիս նորին քսան և վեցի:

Յետ վարդաՎառին միաշաբթի  
Պատկեր աւուրն էր երկուշաբթի.  
Մետասանբորդ ի ժամ ցերեկի  
Պահ մի յառաջ ի մուտս յարևի:

Յանկարծակի հնչեաց հողմն յուժգնակի.  
Կոտորեաց զամեն ծառս՝ և տունկս ի դաշտի.  
Զհողս յերկին ցանեաց՝ ի երեսս երկնի.  
Կարծեցաք թէ՛ նոյն ժամն աշխարհ անցանի:

Մինչդեռ հողմն հնչէր ամպք գումարեցան  
Յարեւմտից կուէ երկինք մթացան  
Ճայթմունք և որոտմունք լինել սկսան.  
Ահնդ ձայնէ նորա մարդիկ սարսեցան:

Կարկուտք և կայծակմունք՝ յերկնուտ թափէին.  
Անձրեք զերդ ամանէ՝ հեղեալ լինէին.  
Լերանց բարձանց շուրն՝ ի ձորն զեղուին.  
Լայնացեալ և խորացեալ իբրև զգետ ահազին:

Չայն հեղեղի ջրոյն՝ ահազին հնչեաց.  
Զմեծամեծ քարինս՝ ի վայր հոլովեաց.  
Ահնդ որոտմամբ՝ ի քաղաք դիմեաց.  
Բազում տունս և ապարանս՝ ի հիմանց քակեաց:

Ի Սուլթան պաղէն սկսեալ մինչև ի մէլտան (1),  
Յաւելի քան զհարիւր՝ շինուածք քանդեցան.  
Մարդիկ թողին գտունս՝ վերիվեր փախեան  
Եօթն հոգիք միայն ջրասոյգ մեռան:

Այս Աստուածածին ժամս՝ ափ ջրոյն եղեալ.  
Նախ արտաքին պարիսպն ծայրէ ծայր անկեալ.  
Յետոյ յեկեղեցւոյն՝ ի ներքս վազեալ.  
Մինչ ի տուրք սեղանն ջրոջն լցեալ:

Բայց նոյն ժամն յեկեղեցին՝ ոչ զնասեցաւ.  
Այլ հողաչէն էր շուրն առ իւքն արգելաւ.  
Օր ըստ օրէ որմունք՝ խախտեցաւ փլաւ.  
Չառաստղոս ի գետնի հաւատարեցաւ:

Իսկ մեք քրիստոնեայքս՝ որք անդ դիպեցաք.  
Սուգ զզեցեալ՝ արտասուօք լացաք.  
Կոծ իբրև սիրելոյ առեալ ողբացաք.  
Որդիքս ի մօրէն լուսոյ՝ ի որբ մնացաք:

Յետ բազում լալոյն սակաւ սփեցաք.  
Ազօթիւք և արտասուօք առ տէր դիմեցաք.  
Զկոյսն Մարիամ միջնորդ կացուցաք.  
Զհնարս իրին բարւք խնդրեցաք:

(1). Առաջին պաղքն քաղաքին հարուային արեւմուտքը, ծործոր մը զարբը կազմող կանանչուխա պարտեզաշարքն է, իսկ մէյտանը միջնաքաղաքի կրկէս մըն է Քրքական, որ առաջինն կը միանայ Գափան ալքը գետակով:

« Այսքան վաճառական եկեղեցոյ » :  
 Մինչդեռ ժողովուրդը խորապէս տրտմա-  
 թախիժ էր, չէ՞. Յովսէփի անուն երիտա-  
 սարդ մը քաջալերելով վճատեալ ժողո-  
 վուրէն, իր պատրաստակամութիւնը կը  
 յայտնէ եկեղեցւոյն վերականգնումին հա-  
 մար, ու հանգանակութիւն կը կատարէ,  
 պատկանեալ պաշտօնեայէն վաւերագիր ու  
 խնդրագիր մը կ'առնէ և երկու ընկերնե-  
 ըով կը չուէ էջ. Պոլիս Եպարքոս իպրա-  
 հիմ փառան արդէն ծանօթ հեղեղին գոր-  
 ծած ընդհանուր աւերին՝ արտօնութիւն կը  
 շնորհէ : Լէ՞. Յովսէփի դիւանական ծախքը՝  
 200 կարմիր դահկան՝ կը վճարէ և կու-  
 տինա կը վերադառնայ երկու ամիս վերջ,  
 ցնծութեան փոխակերպով համայնքին սու-  
 զը : Եկեղեցին կը սկսի վերաշինուիլ. տա-  
 ղերգուն ուրախ շեշտով մը կը ցնծերգէ

Գարձեալ ի նոյն քանիս թ՛վին.  
 Ուրում փլաւ եկեղեցին.  
 Երգեաց շնորհ մարդասիրին.  
 Կանգնել զտաճար իւր վերստին :

Ի եղանակն աշնանային.  
 Նոյեմբերի տասն և ութին.  
 Ի խաչվերաց մեծի տօսին  
 Վեցերորդում օր ուրբաթին :

Քահանայից դասք անդ էին.  
 Եւ ամենայն ուխ ընդ նոսին.  
 Եկեղեցոյ հիմն օրհնեցին.  
 Զեռամբ մովսէս վարդապետին :

Այնուհետև սկսեցին,  
 Իւրաքանչիւր ոք արուեստին.  
 Օր ըստ յօրէ կատարէին.  
 Զինչ որ պիտոյք էր շինւածին :

Ճարտար հիւսանք փայտ կոփէին,  
 Եւ քարահատք վէճս տաշէին  
 Վարպետ շինողք վաթսուն և ինն.  
 Զորս կողմանց պարիսպն կանգնէին :

Նախ ըամբ մերոյ ազին.  
 Եկք և բնակք ի միասին.  
 Յուսով վարձու փոխարիւնին.  
 Առհասարակ աշխատէին :

Ոմանք քարինս կրէին.  
 Ոմանք գնողն բրէին.  
 Կէսք ի լեռնէն կիր բերէին.  
 Եւ այլք գայլ նիւթս պատրաստէին :

Ոմանք վերակացոք եղին նոցին.  
 Այլք կերակուրն հոգացին.  
 Ոմանք դրամ համաքէին.  
 Որ առաւել կարիքն էին :

Ի սկսելոյ շինւած սորին.  
 Եօթանասուն յօր յանգելին.  
 Բազումք պէս պէս վիշտ կրեցին.  
 Որիչ որիչ այլ ոչ պատմին :

Նոյեմբերի քսան եօթին.  
 Գործ շինուածոյս կատարեցին.  
 Ապա միայն զայն սպասէին.  
 Ի գալստեան դատաւորին :

Ժողովեցան աւագանին.  
 Եւ դատաւորն հետ ընդ նոսին.  
 Եւ բազմութիւն ռամկաց տաճկին.  
 Եկեալ լցան յեկեղեցին :

Ի ձեռն իւրեանց շուն առին.  
 Բուր պարիսպն չափեցին.  
 Լայնքն և երկայնքն և բարձրութիւն  
 Եւ ութ կանգուն պակաս գտին :

Յայնժամ կրկին հոճէթ տըին.  
 Բստ առաջնոյն օրինակին.  
 Վկայութեամբ զամենեսին.  
 Որք յառաջմէ տեղեակ էին :

Զվճիւն անդարձ հաստատեցին.  
 Ապա չար ներակց լռեցին.  
 Այս էր գործ մեծ կատար իբրն  
 Վերջին քէչֆն. հոճէթ կրկին :

Ա. Ռ. Ն. Ա. Կ

Լիւարո (Քատուա) 1923  
 (Շարունակելի)

